Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման
Օրինակելի ձև

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 23.09.2025թ.840-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — Դավիթ Խուդաթյան, ՀՀ ՏԿԵ նախարար

4. Գործուղման վայրը — Իսպանիայի Թագավորություն, /Վիկտորիա-Գաստեյս/

5. Գործուղման ժամկետները — 06.10-09.10.2025թ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ — ՀՀ 2025թ. պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

***□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը***

*□ բ. գործուղման անհատական իրավական ակտով փչյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն*

| Ծախսի տեսակը | | *Խուդաթյան Դավիթ* | **Ընդամենը** |
|---|---|---|---|
| Ճանապարհա ծախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | էկոնոմ դաս | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | **422174** | **422174** |
| Գիշերավարձ/60%/ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 120 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 53690 | 53690 |
| | Օրերի քանակը | 3 | |
| | Ընդամենը (դրամ) | ***161070*** | ***161070*** |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 91 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 40996 | |
| | Օրերի քանակը | 4 | |
| | Ընդամենը (դրամ) | ***163982*** | ***163982*** |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | |
| | Այլ ծախսեր դիվանագիտական սրահից օգտվելու վճար | | **0** |
| **Ընդամենը ծախսեր** | | ***747226*** | ***747226*** |

13.10.2025թ.

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը: Ա.Երիցյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 840-Ա

## ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին 2025 թվականի հոկտեմբերի 6-9-ը գործուղել Իսպանիայի Թագավորություն (Վիտորիա-Գաստեյս)՝ Բաց կառավարման գործընկերության 9-րդ գլոբալ գագաթնաժողովին մասնակցելու նպատակով:

2. Դավիթ Խուդաթյանի՝ Իսպանիայի Թագավորություն գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել Իսպանիայի Թագավորություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

23.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Երևան

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**2025թ. հոկտեմբերի 6-9-ը Իսպանիայի Թագավորություն (ք. Վիտորիա-Գաստեյզ) կատարած գործուղման արդյունքների մասին**

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Դավիթ Խուդաթյան

2. **<u>ՁԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>**

   Իսպանիայի Թագավորություն, ք. Վիտորիա-Գաստեյզ, 2025թ. հոկտեմբերի 6-9-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Իսպանիայի թվային փոխակերպման և քաղաքացիական ծառայության նախարար Օսկար Լոպես Ագուեդա

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)</u>**

   Մասնակցություն Բաց կառավարման գործընկերության (OGP) 9-րդ համաշխարհային գագաթնաժողովին

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

   Ներկայացվել են՝

   - Հայաստանում տեղական ինքնակառավարման մակարդակում իրականացված մասնակցային նախաձեռնությունները և բարեփոխումները, որոնց արդյունքում հատկապես տեղական մակարդակում փոխվել է երկրում հանրային մասնակցության մշակույթը
   - մասնակցային բյուջետավորումը, կառավարման թափանցիկությունը և հրապարակայնությունը, իրավական բարեփոխումները, Քաղաքացիների սպասարկման գրասենյակների ներդնումը
   - ՏԻՄ-երի հաշվետվողականության բարձրացումը այս բարեփոխումների համատեքստում, բնակչության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, տեղական իշխանությունների հանդեպ վստահության աճը:
   - Նշվել է, որ Հայաստանում շարունակվելու են ներդրվել թվային գործիքներ և ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ մասնակցայնության ընդլայնման ուղղությամբ:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

Հանդիպում է կայացել ԲԿԳ նորընտիր գլխավոր գործադիր տնօրեն Այդան Էյակուզի հետ:

Մասնակցություն է եղել «Մասնակցություն և ներառում» (Participation and Inclusion) կլոր սեղան-քննարկմանը, որի ընթացքում ելույթ է ներկայացվել «Հանրային վստահության վերականգնում մասնակցային կառավարման միջոցով» թեմայով: Ելույթում ընդգծվել է, որ բաց կառավարումը միայն թափանցիկության կամ ինֆորմացիայի հասանելիության մասին չէ, այլև համատեղ իշխանության և համատեղ պատասխանատվության մասին:

## 8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Փաստաթղթեր չեն ստորագրվել:

## 9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առաջարկվել է շարունակել աշխատանքները Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ և այս նպատակով իրականացնել լավագույն փորձի ներդնում՝ ներկայացնելով Հայաստանի ձեռքբերումները միջազգային ասպարեզում:

## 10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

13 հոկտեմբերի 2025թ.